

«ԱՐԱՄ» ԱՆՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ
ԵՐԿՐՈՐԴ ՑԵՂԱՆՈՒՆ

ԱԼԲԵՐՏ ՄՈՒՇԵՂՅԱՆ

Հայկյան նահապետ Արամի կերպարը և նրա քաջագործությունների մասին Մովսես Խորենացու պատմած ավանդությունը արժանացել են տարբեր, երբեմն էլ հակադիր մեկնաբանումների թե՛ պատմաբանասիրական ուսումնասիրություններում և թե՛ արտագիտական շարադրանքներում: Արամը Հայկ նախահոր վեցերորդ շառավիղն է: Հարմայի որդին և Արա Գեղեցիկի հայրը անդրպատմական ժամանակների առասպելական կերպար է: Նրա արշավանքներն ու գործերն այնքան ցայտուն են ներկայացված Խորենացու գրչի տակ՝ աշխարհագրական վայրերի իրական մանրամասն նկարագրով, որ հետազոտող գիտնականին և ընթերցողին նա ներկայանում է իբրև պատմական կատարյալ անձ: Մինչդեռ Գրիգոր Խալաթյանցը, իրեն հատուկ ավերիչ եռանդով, դատափետում էր Խորենացուն՝ Արամի քաջագործությունների կեղծ առասպել հորինելու համար, մատնանշելով, թե «մեր պատմիչը նույնիսկ չի քաշվում նրանից, որ Արամը Ասորիքի հինավուրց անունն է (Գիրք Ծննդոց, Ժ), այլ հակառակ դրան, այդ հանգամանքը կռվան է ծառայեցնում իր հանդուգն երևակայության համար»¹:

¹ Դր. Х а л а т я н ц. Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского. М., 1896, с. 129. Գրադատը Խորենացուն մեղադրում է Դիողորոս Միկիլիացու Պատմությունից լռելյայն օգտվելու և Ասորեստանի թագավոր Նինոսի քաջագործությունները մեղացիների դեմ մի ումն անհայտ Արամի վերագրելու համար, պնդելով, թե Խորենացու այն դրվագը, երբ Արամը մեղացիների առջնորդ Նյուքար Մադեսին ձերբակալելով տանում է Արմավիր և հրամայում երկաթե ցից մեխելով ճակատի մեջ՝ վարսել աշտարակի ծայրին ի տես անցորդների [Մովսիսի Խորենացու Պատմություն Հայոց (այսուհետև՝ Խոր.), Տփղիս, 1913, Ա. ԺԳ, էջ 44], ուղղակի վերցված է Դիողորոսի երկրորդ գրքից և կտրականապես բացառում է որևէ այլ աղբյուրից օգտվելու ենթադրությունը (Դր. Х а л а т я н ц. Армянский эпос..., с. 130), մինչդեռ հույն հեղինակի պատմածն այն է, որ Նինոսը, հաղթելով մեղացիների թագավոր Ֆառնոսին, գերի է վերցնում նրան իր յոթ որդիների ու կնոջ հետ և խաչ բարձրացնում (Դի ո դ ո ռ ո ս Մի կի լի ա ցի. Պատմական գրադարան I, 10, թարգմ. Ս. Կրկյաշարյան, Երևան, 1985, էջ 16): Գրադատն ամենին չի մտահոգվում, որ իր չափից ավելի մանրակրկիտ քննությունը հաճախ վերածվում է մանրախնդրության՝ երևան հանելով իր իսկ հակագիտական մերկ միտումները. այսպես, նա պնդում է, թե այն արտահայտությունը, որ արևը ծագելուց առաջ Արամը հանկարծորեն հարձակվեց Մադեսի վրա, իբր սոսկ գրքային փոխառություն է և այն էլ հենց միայն Սեբեոսի Պատմությունից (Դր. Х а л а т я н ц. Армянский эпос..., с. 131), նկատի ունի հույների դեմ Խոսրով Փարվեզի ճակատամարտը Ուռնայի մոտ՝ «Եւ (Խոսրով) հասեալ ի վերայ նոցա յանկարծօրէն ի ծագել առաւուտուն՝ զոմանս սատակէր սրով, զոմանս փախստական արարեալ...» (Պատմութիւն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլն, հրատ.՝ Ք. Պատկանյանի, Ս. Պետերբուրգ, 1879, էջ 72. Պատմութիւն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլն, հրատ.՝ Գ. Արզարյանի, Երևան, 1979, ԼԱ, էջ 107): Գ. Խալաթյանցը մոռանում է, որ պատմության մեջ

Եվ սակայն, նման արտառոց գնահատականը միանգամայն տրամաբանական էր XIX դարի վերջի և XX դարի հակախորենացիական միտումնավոր գերքրննադատության համար: Հարկ է նշել, որ Խորենացին Գր. Խալաթյանցից 14 դար ավելի վաղ գիտե, որ Ասորի երկիրը կոչվում է Արամ: Երբ Մաշտոցի կենսագիր Կորյունը գրում է, թե «...[առեալ երանելոյն Մաշթոցի դաս մի մանկտոյ հրամանաւ արքայի...] երթեալ հասանէր ի կողմանս Արամի ի քաղաքս երկուս Ասորոյ»², ապա, օգտվելով Կորյունից, Խորենացին ի «կողմանս Արամի» արտահայտության փոխարեն գործածում է ավելի սովորական Միջագետք անունը. «Ձկնի այտորիկ ինքնին Մեսրոպ իջան է ի Միջագետս հանդերձ աշակերտօք»³: Շատ հնարավոր է, որ, ըստ հայ ժողովրդական ավանդության, Ասորի երկիրն Արամ է կոչվել հենց հայոց նախնիներից Արամի անունով, որը համաձայն Խորենացու պատմածի՝ Ասորեստանի կողմերում պատերազմում է իր երկիրն սպականող Բարշամի հետ՝ հսկաների ցեղից, որն անապատ էր դարձրել իր շրջակայքը՝ նեղելով նրանց սաստիկ ծանր հարկերով: Հայկազն Արամը նրան հալածում է Կորդուքի միջով և շարտում Ասորեստանի դաշտը, շատերին կոտորելով, իսկ Բարշամը սպանվում է Արամի զինակիցների ձեռքով: Ասորեստանի դաշտերի մեծ մասը Արամը գրավեց և հպատակության մեջ պահեց երկար ժամանակ: Սրանով իսկ Խորենացին կարծես դիտել է տալիս, թե իր օգտագործած աղբյուրում Ասորեստանի այդ դաշտը կոչված է եղել Արամ, բայց ինքը՝ Պատմահայրը, զանց է առնում այդ անունը, ինչպես Կորյունի դեպքում, որովհետև նա այդ անունը պահում է ավելի մեծ նպատակի՝ հայոց ազգը նրա անունով կոչելու համար:

Խորենացին միակն է մեր V դարի հեղինակների մեջ, որ հայերին մեր նախնի Արամի անունով անվանում է «Արամագնեայք», «Արք Արամեանք», «Արամեան ազնիք»⁴: Կարծիք կա, որ Արամի առասպելական կերպարում արտացոլվել է հայ ժողովրդի հիշողությունը մ. թ. ա. IX դ. կեսերի ուրարտական առաջին

բազմաթիվ են այն դեպքերը, երբ մեծ ճակատամարտերը սկսվում են վաղ լուսարացին: Որպես բազում օրինակներից մեկը հիշենք Փավստոսի Պատմությունից Մեծ Հայքի սպարապետ Վաչե Մամիկոնյանի ճակատամարտը Հայաստան ներխուժած մասքութների դեմ. «հասանէր անկանէր (գորավարն Վաչէ) ի վերայ բանակին, յառաւօտուն ժամուն այգենալոյն պաշտամանն... և առ հասարակ ընդ սուր հանին զամենեսեան, և ոչ մի ոք ապրեցուցանէր» [Փաւստոսի Բիզանդացոյ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Բուգ.), Երևան, 1987, Գ. Է, էջ 28, 30]. հմմտ. «յանկարծօրէն ի վերայ հասեալ Արամ յառաջ քան զծագել արեգական՝ սատակեաց զբազմութիւն ամբոխիցն» (Խոր., Ա. ԺԳ, էջ 44): Այսուհանդերձ, այստեղ խոսք կարող է լինել միայն էպիկական ոճերի ընդհանրության մասին, իսկ Փավստոսի ազդեցությունը Խորենացու վրա ակնհայտ է դառնում այլ փաստից, որ նույն գլխում պատմվում է, թե ինչպես Սանեսանի գլխավորությամբ հյուսիսային ցեղերը մի տարի շարունակ սասպատակեցին Հայաստանը («Եւ նա ծածկեալ բռնացեալ ունէր զերկիրն առ հասարակ իբրև տարի մի», Բուգ., էջ 28): Ուստի, Խորենացին մեղացիների արշավանքը Հայաստան համեմատում է պատմական այդ փաստի հետ, նշելով, թե նրանք «բուշանաբար հինիւ սմբակակոխ արարեալ զսահմանս Հայոց՝ ծառայեցոյց ամս երկուս» (Խոր., Ա. ԺԳ, էջ 44):

² Գ ո ը յ ո լ ն. Վարք Մաշտոցի, Երևան, 1941, [Է], էջ 46:

³ Խոր., Գ. ԾԳ, էջ 326:

⁴ Խոր., Ա. Զ, էջ 27, Բ. ՂԲ, էջ 247, Գ. ԲԹ, էջ 293:

թագավոր Արամեի⁵ մասին: Բայց բացառված չէ նաև հակառակը, քանի որ, ինչպես Խորենացին է ասում, շատ հին ժամանակներից հայ ժողովրդի մեջ սովորություն կար քաջերի նախնիների անունով կոչել հետևորդ սերունդներին ըստ հույսի, այսինքն՝ նրանց նույնպիսի քաջությամբ և առաքինությամբ օժտելու հույսով⁶:

Ասվածին հակառակ, Արամ անվան մեջ գերմանացի ականավոր հայագետ Յոզեֆ Մարկվարտը տեսնում էր իրավամբ հայ ժողովրդի ցեղանունը: 1919 թվին, Հայոց մեծ եղեռնի շրջանում, երբ ամենուրեք խոսում ու տպագրում էին հայ ժողովրդի բնաջնջման ու հոգեվարքի մասին, գերմանացի անխոնջ հայագետը Բեռլինում հանդես եկավ «Հայ ազգի ծագումն ու վերածնունդը» խորհրդանշական վերնագրով աշխատությամբ, որում նա առաջին անգամ հայ ժողովրդի նախնի արմեններին նույնացնում է Հումերոսի «Բլիականում» (երգ երկրորդ, տող 783) հիշատակված Ἄρμιοι (արիմներ) ցեղի հետ⁷: Նկարագրելով աքայացիների ահեղ ճակատամարտը Բլիոնի (Տրոյայի) դեմ՝ Հումերոսն այն համեմատում է Ջևսի և Տիփոնի մենամարտի հետ, երբ Ջևսը շանթ ու կրակ էր թափում Տիփոնի վրա, և այս կապակցությամբ Հումերոսը հիշում է, որ Տիփոնի մահիճը (=շիրիմը) գտնվում էր արիմների երկրում:

*Չորքը շարժվեց. երկիրն ամբողջ ասես ծածկվեց բորբ կրակով:
Թնդաց հողը, կարծես ճայթեց Ջևսի գայրույթը շանթարձակ,
Որ Տիփոնին հարվածելիս, ողջ երկիրն է շանթով թակում
Արիմայում, ուր, ասում են, անկողինն է գոռ Տիփոնի⁸:*

Հույն դիցաբանության մեջ Տիփոնը հարյուր գլխանի հսկա է՝ ոտքերի փոխարեն գալարվող օձեր. ըստ երևույթին, հներն այդ կերպարանքով էին պատկերացնում հրաբխի երևույթը:

Ավելի ուշ շրջանի հույն հեղինակներ՝ ինչպես բանաստեղծ Պինդարոսը (մ. թ. ա. 518-446) և ուրիշներ, Տիփոնի հայրենիքը՝ Արիմների երկիրն ավելի որոշակի ցույց են տալիս Կիլիկիայում: Խոսքն այստեղ հյուսիսային Կիլիկիայի մասին է, որ հետագայում մտավ Կապադոկիա պրովինցիայի մեջ:

⁵ Արամեն ժամանակակից էր Ասորեստանի թագավոր Մալմանասար III-ին (860-825) ու վերջինիս 860, 858 և 846 թթ. արշավանքների արձանագրություններում հիշատակված է Արամու ձևով:

⁶ Հայկյան 9 բնիկ պսակավորների (թագավորների) շարքում հիշելով Երվանդ Սակավակյացին և Տիգրան Ա-ին, Խորենացին ավելացնում է՝ «Քանզի և վերջին Երուանդ և Տիգրան ի սոցանէ ըստ յուսոյ կոչեցեալ ասեմ արդեօք» (Ա. ԻԲ) - «որովհետև ես հավանական եմ գտնում, որ սրանց անունով կոչված են Երվանդն ու Տիգրանն ըստ հույսի»:

⁷ J. M a r q u a r t. Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation. Berlin-Schöneberg, 1919, S. 67. Նույն գաղափարները Մարկվարտը զարգացրեց «Le berceau des Arméniennes» («Հայերի օրրանը») ֆրանսերեն ուսումնասիրության մեջ. տե՛ս Revue des études arméniennes, t. VIII, Paris, 1928, fasc. 2, p. 221-223.

⁸ Հ ն մ էր ու. Բլիական, հին հունարեն բնագրից թարգմանեց Համագասպ Համբարձումյան, Երևան, 1955, էջ 73: Թարգմանության մեջ քաղվածի վերջին տողում «Արիմայում» պետք է լինի. «Արիմների երկրում»:

Այսպիսով, նախնական առասպելը ենթադրում է մի հրաբուխ, որը պետք է գտնվեր միաժամանակ Արիմների երկրում և հինավուրց Կիլիկիայում: Այս վկայությունների հիման վրա գերմանացի գիտնական Յոզեֆ Պարչը «Երկրաբանությունը և դիցաբանությունը Փոքր Ասիայում»⁹ աշխատության մեջ հանգեց այն եզրակացության, թե հույն հեղինակների ակնարկած հրաբուխը Արգայոս (Առգեոս) լեռն է Կեսարիա քաղաքից հարավ: Մարկվարտը ժխտում է անտիկ պատմագիր և ստոիկյան փիլիսոփա Պոսեյդոնիոսի (մ. թ. ա. 135-51), ապա նաև իր հայրենակից Յ. Պարչի կարծիքը, որոնք արիմներին նույնացնում են արամեացիների (ասորիների) հետ: Նա ցույց տվեց, որ արամեացի-ասորիները բնակվում էին ոչ թե Արգայոս լեռան մոտ, այլ ավելի հյուսիս՝ Պոնտական ծովի շրջանում, և, նրանց հակառակ, Արգայոսի մոտ ապրած Arimoi ցեղի մեջ տեսնում է հայերի նախնիներին: Մարկվարտը միանգամայն հավաստի է համարում Լեման-Հաուպտի եզրակացությունը Կապադովկիայում Ուրմենի ցեղի՝ Արմենների բնակության մասին՝ հիմք ընդունելով Մենուայի արձանագրությունը: Այստեղ էր գտնվում վերոհիշյալ հյուսիսային Կիլիկիան, և նշված ժամանակն էլ ճշտիվ համապատասխանում է Հումերոսի «Իլիականի» ստեղծման շրջանին:

Ինչպես գիտենք՝ Մենուան թագավորել է մ. թ. ա. 810-786 թթ., կարելի է ասել՝ հումերոսյան դարաշրջանում¹⁰, և ուրեմն Ուրմենի-Արմենի ցեղի գոյությունը Կապադովկիայում Հումերոսի ժամանակվա իրողություն է, միայն թե հույն մեծ հագներգուն (ռապսոդ) արիմներ ասելով նկատի ունի իր ժամանակակից կապադովկացի արմենների առասպելական նախնիներին:

Մարկվարտը բացահայտում է նաև Արիմների առասպելի և Արամի ավանդության միջև եղած, առաջին հայացքից չնշմարվող ազգակցական-բանահյուսական աղերսը: Հայ բանահյուսության համար կատարյալ հայտնություն պետք է համարել նրա այն տեսակետը, որ Խորենացու պատմած Արամի պատերազմը Տիտանյան Պայապիս Քաաղյայի դեմ «Իլիականում» ավանդված Ջևսի ու Տիփոնի մենամարտի ուրույն տարբերակն է: Այստեղ Տիտանյան Պապայիսը¹¹ Տիփոնն է, իսկ Ջևսի դեմ հայկական տարբերակում պատերազմում է ինքը՝ Արամը, որը, եթե առասպելը լրացնենք Խորենացու պատմած ավանդությանը, սերում է հայոց նախահայր Հայկից, և Մեծ Հայքից արշավելով, ազատագրել է Փոքր Ասիան՝ Միջերկրալից, Տիտանյան Պայապիսի բռնակալությունից: Ուշագրավ է, որ հայկական ավանդության մեջ նս պատերազմը տեղի է ունենում Մաժաք-Կեսարիայի տարածքում, ուրեմն՝ Արգայոս լեռան մոտ, որի ընդերքում Ջևսը թաղում է պարտված Տիփոնին: Մինչդեռ Խորենացու հաղորդած

⁹ Joseph Parstsch. Geologie und Mythologie in Kleinasien. Berlin, 1888, S. 105.

¹⁰ Ենթադրվում է, որ Հումերոսն ապրել է մ. թ. ա. XII-VII դդ. միջակա ժամանակաշրջանում:

¹¹ Մարկվարտն առաջարկում է Պայապիսն ուղղել Պապայիս, այսինքն՝ Πάπαιος Χιμλιόλυνης - «Քիմեոսի Պապայոս» (տե՛ս J. Marquart. Նշվ. աշխ., էջ 68): Ավելացնենք, որ ըստ Հերոդոտի (գիրք 4, 59)՝ սկյութներն իրենց լեզվով Պապայոս էին անվանում Ջևսին: Խորենացու բերած ծննդաբանության (Ա. Ե) համաձայն Քայաղը Ներբովթի՝ ասորեստանցիների նախահայր Տիտանյան Բելի սերունդներից էր և Քամից հաշված ութերորդը, որը սերեց Արբելին, իսկ սա էլ Նինոսին: Ըստ այսմ, Տիտանյան Պայապիս Քաաղյանը Քայաղի որդիներից մեկը պետք է լիներ և Նինոսի հորեղբայրը:

ավանդության մեջ Արամը Պայապիսին հալածում-փախցնում է Ասիական (Միջերկրական) ծովի մի կղզի. ակներևաբար, ասացողը այժի առաջ է ունեցել մի այնպիսի կղզի, որտեղ շարունակում էր ժայթթել հրաբխային լեռը¹²: Առասպելի նմանօրինակ շարունակություն ավանդում է անտիկ հույն ողբերգակ Էսքիլեսը «Շղթայված Պրոմեթևսը» ողբերգության մեջ:

Յ. Մարկվարտի կարծիքով Արմինա երկրանունը և Արմեն ցեղանունը առաջ են եկել *arm* արմատից, որն էլ ծագել է *ar(i)m* կամ *ar(u)m* անունից՝ անշեշտ վանկի սղումով: *Arm* արմատին կցվել է խալդերեն (ուրարտերեն) *-ini* կամ *ina* վերջածանցը, ինչպես խալդինի, մուշկինի: Համանման հոգնակերտ և հավաքական վերջածանց ունենք և հայերենում՝ ազատանի, ընտրանի:

Ստուգաբանելով Արմեն ցեղանունը՝ Գ. Ջահուկյանը կարծում է, որ դրա հիմքում ընկած է հայերեն արմ(ն) արմատը. հմմտ. *q*-արմ «ցեղ, սերունդ», արմատ «արմատ, ցեղ, զարմ, հիմք» և սերում է հնդեվրոպական *er* արմատի *ormenos* ածանցյալից¹³:

Ըստ երևույթին, Արիմ ցեղանունը առկա է նաև Հին կտակարանի Թոգարմա¹⁴ անվան մեջ՝ Հաբեթի որդի Գամերի (Գամիրք, Կապադովկիա) որդին, որին օտար հեղինակները վաղուց ի վեր համարում էին հայ ժողովրդի նախահայր, ինչպես Հռոմի եպիսկոպոս Հիպոդիտոս Պորտվացու ժամանակագրության մեջ (մ. թ. 235 թ.)՝ «*Thogarma, ex quo Armenii*»¹⁵ («Թոգորմա, որից (են) հայերը»): Խորենացու մոտ (Ա. Ե) Թորգոմը հայերի նախնի Հայկի հայրն է, Գամերի թոռը և Թիրասի որդին: Եզեկիելի մարգարեության մեջ (ԲԷ. 14) երբայերեն՝ բեթ Թոգարմա (տուն Թորգոմայ) ավանդաբար հասկացվել է Հայաստան, մասնավորապես Փոքր Հայք, իսկ *V* դ. հայ մատենագրության մեջ՝ ազգ Թորգոմայ, տուն Թորգոմայ, Թորգոմական աշխարհ արտահայտությունները լայնորեն կիրառվում էին հայոց ազգ և Հայոց աշխարհ նշանակությամբ:

Վերջերս կրկին աշխուժացել են Արամ անունը և նրա ավանդության մեջ պահպանված պատմական դրվագներն ու էպոնիմները գիտական և բանագիտական հիմունքով մեկնաբանելու փորձերը: Ակադ. Գ. Ջահուկյանը բացահայտում է այն կարևոր հանգամանքը, որ Մ. Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքում Հայկյան առաջին սերունդների անունների մեջ «Արմեն անվան հետ կապված փոփոխականեր են նաև Արամանեակ (Արմենակ), Արամայիս

¹² Այն, որ Խորենացու մոտ Արամը Պայապիս Բաադային փախցնում է Ասիական (Միջերկրական) ծովի մի կղզի, ձայնակցում է հունական առասպելի մի տարբերակին, որտեղ Տիփոնը հայտնվում է Միկիլիա կղզում: Այս տեղաշարժը պետք է բացատրել նրանով, որ Հռոմեոսին հաջորդած դարերում ընդլայնվել է առասպելի աշխարհագրությունը՝ ընդգրկելով նոր հրաբխային վայրեր: Ահա թե ինչու Էսքիլեսի «Շղթայված Պրոմեթևսը» ողբերգության մեջ Ջեսը Տիփոնի վրա է շրջում Էտնա լեռը, որի տակից սկսում է հրաբուխ ժայթթել:

¹³ Գ. Ջ ա հ ու լ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 377:

¹⁴ Հունարեն *×Յոթանասնիցի* (Septuaginta) թարգմանության մեջ առկա է անվան երեք ձև՝ Թորգամա (Θοργαμά), Թորգոմա (Θοργομά), Թերգամա (Θεργαμά), որոնցից և հայերեն Աստվածաշնչում ունենք միանման՝ Թորգոմա (Գիրք ծննդոց, Ժ. 3, Ա. Մնացորդաց, Ա. 6, Եզեկիել, ԲԷ, 14):

¹⁵ Chronicon Paschale, p. 98 (Migne, t. 92).

(Արմայիս) և, թերևս, Հարմա անունները, սակայն ոչ թե «հնարած» Խորենացու կողմից, այլ կազմված սովորական ձևով՝ Արամ-ից (Արամ→Արամեան→Արամենակ>Արմենակ), կամ առնված առասպելներից ու այլ աղբյուրներից¹⁶: Համերաշխելով ականավոր լեզվաբանի և հայագետի տեսակետին, անվանի բանագետ, հայագետ Ս. Հարությունյանը նորերս հրատարակած «Հայ առասպելաբանություն» հիմնարար աշխատության մեջ առասպելա-դիցաբանական հենքի վրա մեկնաբանում է այս երևույթը. «Այստեղ սուկ անձնանունների մակարդակով, գործ ունենք առասպելաբանաստեղծական լեզվին ու մտածողությանը խիստ բնորոշ անագրամային երևույթի հետ, երբ նույն կամ նմանահունչ անունների, բառերի, ձևայինների խաղացկուն կրկնություններով իրացվում են որևէ դիցանուն կամ սրբազան անուն, կամ նրա մակդիրներն ու հատկանիշները»¹⁷: Այդ անունների մեջ, որոնք Խորենացու հորինածը չեն, այլ ավանդված են խոր անցյալից, «գործում է հին առասպելաբանական նույն մտածողությունը, այն է՝ տարբեր անձնանունների հիմքում շարունակ իրացնել ու շեշտել միևնույն գլխավոր անձնանունը կամ նրա արմատական բաղադրիչը, որ բնավ պատահական զուգադիպում չի կարող դիտվել»¹⁸:

Ընդհանրացնելով կարող ենք հաստատել, որ ինչպես Թորգոմի անվան հունարեն Թերզամա ձևի մեջ, այնպես էլ Հայկի սերունդների անվանաշարքում, բացի Գեղամից, ներառյալ թերևս նաև Ամասիա անունը [= Արմասիա], բացահայտում է ազգանվանակերտ Արամ անունը, որի համար էլ Խորենացին հայերին կոչում է Արամեան ազգինք:

Հին հույն փիլիսոփա Պլատոնը մեռնող-հառնող Էրին (հուն.՝ Էրոս), որը մի խիզախ ռազմիկ է և պատերազմում ընկնելով՝ հարություն է առնում դիակիզման ժամանակ, ներկայացնում է իբրև ծնունդով պամփյուլացի Արմենիոսի որդի: Մի շարք հայագետներ (Մ. Էմին, Ն. Ադոնց, Գր. Ղափանցյան) «Էր, որդի Արմենիոսի» թարգմանում են «Արա Հայկազն», այն է՝ «Արա հայորդի», որով նկատի ունեն հայոց Արա Գեղեցիկին: Սակայն Ս. Հարությունյանն առասպելական այս երկու կերպարները համադրելով, ի հայտ է բերում դրանց նույնացնող ևս մի ցայտուն հատկանիշ՝ «Էր, որդի Արմենիոսի» մեկնելով «Արա, որդի Արամի», որով Պլատոնի ավանդած հայկական կերպարը, փաստորեն, նույնանում է Խորենացու Պատմության առասպելախառն կերպարին՝ Արամի որդի Արա Գեղեցիկին: «Էր, որդի Արմենիոսի» անունը պլատոնյան արտահայտության մեջ ավանդաբար դիտվել է իբրև սուկ ազգանիշ անուն (հայ, հայկազն), ուստի ուշ չի դարձվել նրա վրա՝ իբրև անձնանվան: «Մինչդեռ իրականում հունակզու այս առասպելում նույնությամբ արտացոլված է հայկական առասպելի Արայի ծննդաբանությունը՝ Արա-որդի Արամի: Հետևաբար ոչ միայն Էրն է համապատասխանում Արային, այլև հայրը՝ Արմենիոսն է համապատասխանում

¹⁶ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» առաջին գրքի անձնանունների լեզվական աղբյուրները.– ՊԲՀ, 1981, №3, էջ 52: Արմեն, թերևս, տպագրական վրիպակ է, պետք է լինի Արամ:

¹⁷ Ս. Հ ա թ ո թ յ ո լ յ ա ն. Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 376:

¹⁸ Նույն տեղում:

Արամին»¹⁹: Մրանով հաստատվում է նաև նրանց ազգակցական կապը՝ իբրև հայր և որդի: Այս նոր կոնահումով ավելի ևս հասկանալի է դառնում Մովսես Խորենացու այն միտքը, որ շրջակա ազգերը (հույն, պարսիկ, ասորի և այլն) Արամի անունով հայ ազգը կոչել են Արմեն, քանի որ ևս մի նոր հնավանդ վկայություն ունենք Արամ և Արմեն(իոս) նույնության:

1997 թ. Ա. Պետրոսյանը հրապարակեց «Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգաձագման խնդիրը» աշխատությունը, որի մեջ հիմնականում հնդեվրոպական լեզուներով ստեղծված առասպելաբանության, ինչպես և կովկասյան ու այլ առասպելների մանրակրկիտ քննությամբ փորձել է վեր հանել Արամի հայկական առասպելի հնագույն շերտերը: Գրքում զգալի տեղ են գրավում «սև» ու «սպիտակ» հերոսների ընդդիմակայությունը, և առհասարակ «սևի» ու «սպիտակի» հակադրումը, որ դրսևորվում է ինչպես երկնային և գերբնական ուժերի հակադրությամբ, այնպես էլ մարդակերպ ու կենդանակերպ գոյակների ընդդիմամարտության բազմազան դրվագներով: Առաջին թեմայի դրսևորումներից է Ջեսի և Տիփոն հրեշի մենամարտը, որի մասին խոսք եղավ վերևում: Ըստ հեղինակի՝ Արամը համադրվում է սև որսորդի հետ, որպես գիշերային ռազմիկների առաջնորդ և նույնացվում հնդկական «Ռամայանա» էպոսի գլխավոր հերոս Ռամայի հետ: Մրան հակառակ՝ Տիտանյան Բելը և արևմտասեմական Բարշամը «սպիտակ հերոսների» տիպեր են, որոնք հայ առասպելաբանության մեջ հակադրվում են Հայկին և Արամին:

Անկախ վիճելի որոշ եզրակացություններից, հարկ է նշել, որ Ա. Պետրոսյանն իր գրքում մեկտեղել և քննության է առել բազմաթիվ ժողովուրդների ու հին ցեղերի առասպելական բանահյուսությունը, որը հետաքրքիր է ինքնին, և հարուստ նյութ կարող է մատակարարել հետագա ուսումնասիրությունների համար:

Պրոֆեսոր Բ. Հարությունյանը 1998 թվին հանդես եկավ մի ուսումնասիրությամբ՝ «Հայաստանի հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ. թ. ա. VII-VI դդ.)» տարողունակ վերնագրով: Հարկ եմ համարում մատնանշել, որ հեղինակը նշանակալից խնդիրներ է առաջադրում հին աղբյուրների համեմատական քննությամբ և բավական ընդարձակորեն անդրադառնում է սույն թեմային: Այստեղ, անդրպատմական Հայկազն Արամի անձն ու գործերը նույնացվում են, և, պիտի ասել, միանգամայն անսպասելի ուրարտական (Վանյան)՝ թագավոր Ռուսա III-ի հոր՝ Էրիմենայի հետ, որը թագավորել է ենթադրաբար վանյան թագավոր Սարգուրի IV-ի անկումից հետո՝ մ. թ. ա. 633-ին հաջորդած շրջանում:

«Կատարված քննությունը ցույց է տալիս, – գրում է Բ. Հարությունյանը, – որ Էրիմենան հենց այն անձնավորությունն է, որի գործունեությունը վերագրվել է

¹⁹ Նույն տեղում, էջ 378:

Արամին»²⁰: Այս բացահայտումը ինքնին չափազանց ուշագրավ է, անկախ Արամի ավանդությունից, հատկապես այն պատճառով, որ հանձին Էրիմենայի ներկայացվում է Հայաստանում Վանի թագավորությանը հաջորդած նոր թագավորական հարստության, այն է՝ Երվանդունիների թագավորական տան հիմնադիրը²¹, թեև նշված է, որ նրա թագավորելու մասին սեպագիր արձանագրությունները որևէ տեղեկություն չեն հաղորդում: Խնդիրը կարևորվում է նաև այն առումով, որ հարգարժան հեղինակը Արամ-Էրիմենայի հետ է կապում նաև Մովսես Խորենացու այն հաղորդումը, թե շրջակա բոլոր ազգերը նրա անունով սկսեցին հայ ժողովրդին անվանել Արմեններ, հույները՝ Արմեն, իսկ պարսիկներն ու ասորիները՝ Արմէնիկ²²:

Իհարկե, Հայկազն Արամին վերագրվող որոշ ճակատամարտեր կարող էին տեղի ունենալ նշված ժամանակաշրջանում, սակայն երբ առասպելախառն կերպարները հանդիպադրվում են պատմական անձերի հետ, երբ հինավուրց ավանդապատումը փոխադրվում է պատմական հողի վրա, առաջ են գալիս, անշուշտ, ժամանակագրական և պատմական որոշակի անպատեհություններ: Մենք այս դեպքում բախվում ենք գրեթե անլուծելի խնդիրների հետ, էլ չեմ խոսում այն խորհրդավոր առեղծվածի մասին, որպիսին է որևէ հինավուրց ժողովրդի անվանակոչումը. ժողովուրդ, որը շարունակում է ապրել շատ ազգերի ու ցեղերի բնաջնջումից հետո: Ինձ՝ բանասերիս համար, պարզից էլ պարզ է, որ որևէ իրական պատմական անձի անուն, որքան էլ նա երևելի լինի, չի կարող էթոնիմ ծառայել դարերի խորքից եկող ազգերի համար, չխոսելով արդեն մի անձի մասին, որի թագավորելն իսկ սոսկ ենթադրվում է: Եվ, իսկապես, եթե Արմենների ցեղանունը ծագում է ընդամենը մ. թ. ա. 633 թվից այս կողմ ենթադրաբար թագավորած Էրիմենայի անունից, ապա դա չի նշանակում, որ հայ ժողովրդի կազմավորումը դարձյալ հասցնում ենք մ. թ. ա. VI-V դդ. սահմանագծին, որպիսին թույլատրված էր խորհրդային ազգերի Ծննդոց գրքում: Եթե հայ ժողովրդի երկրորդ էթոնիմը՝ «Արմեն», որով ճանաչում են մեզ գրեթե բոլոր օտար ազգերը (բացի, թերևս, վրացիներից «սոմեխի»), ծագում է ընդամենը մ. թ. ա. VII դարի երկրորդ կեսին ապրած «մի տեղական արքայիկի»²³ անունից, ապա ո՞ւմ հետ է առնչվում Մենուայի և Արգիշտի I արձանագրություններում հիշատակված «Ուրմենի» և «Ուրմեինի» ցեղը²⁴: Կապադովկիայում Պոռտին - Արմենիան հիմնելու մասին Արամի ավանդության մեջ արտացոլվել է հայ ժողովրդի հիշողությունը վաղնջական ժամանակներում Փոքր Ասիայում հին հայերի բնակության վերաբերյալ, որի վավերական վկայությունն է 1898-1899 թթ. Արևմտյան Հայաստանում կատարած հնագիտական պեղումների ժամանակ Լեման-Հաուպտի հայտնաբերած արձանագրություններից մեկը: Մենուան եր-

²⁰ Բ. Հ ա ր ր ո թ յ ու ն յ ա ն. Հայաստանի հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ. թ. ա. VII-VI դդ.), Երևան, 1998, էջ 72:

²¹ Նույն տեղում:

²² Խոր., Ա. ԺԲ, էջ 42, Բ. Հ ա ր ր ո թ յ ու ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 72:

²³ Բ. Հ ա ր ր ո թ յ ու ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 72:

²⁴ Ն. Ա դ ո ն ց. Հայաստանի պատմություն (ակունքները X-VI դդ. մ. թ. ա.), Երևան, 1972, էջ 157 և 169:

կու անգամ հիշատակում է արշավանքի ժամանակ հայատակեցրած Ուրմենի ցեղը: Այդ անվան մեջ գերմանացի երախտաշատ հնագետը հակված էր տեսնել Տարոնում բնակվող հին արմեններին, որոնք ենթադրաբար այստեղ էին գաղթել Կապադովկիայից²⁵:

Հիշյալ արձանագրության մեջ ասված է²⁶. «Մենուան՝ Բշպուինիի որդին, արշավեց *Alau - (ni)*՝ Ուրմենի ցեղի (երկիրը): Նա ավերեց *Alau-(ni)*-ն, ջարդեց *Ursai-ni*-ի (բնակիչներին), գրավեց երկիրը, Ուրմենի ցեղը խոնարհեցրեց»²⁷: Մենուայի որդի Արգիշտի I-ը (մ. թ. ա. 786–764) իր գահակալության 13-րդ տարում գրված արձանագրության մեջ դարձյալ հիշատակում է Ուրմեն երկիրը: Իր գահակալության 13-րդ տարում՝ 774 թ., նա գրավեց *Tariu-ni*-ն, գրավեց ու կոդուպտեց Ուրմեինի երկիրը (^{KUR}*Urme-ini*)²⁸ և տղամարդկանց ու կանանց տարավ Վանի երկիրը (^{KUR}*Biaina*): Համաձայն Սարդուրի II-ի (Արգիշտի I-ի որդու – 764–735) մի արձանագրության, նա ևս արշավել է Արմե կամ Ուրմեն երկիրը (^{KUR}*Urmeue-edi*), գրավել ու ավերել 11 բերդ և քշել տարել այնտեղից ինը հազար վեց հարյուր ռազմիկ, կին ու դեռահաս²⁹: Նշանակում է, արդեն իսկ մ. թ. ա. VIII դարի առաջին կեսից սկսած ուրարտական սեպագրերը վկայում են Տարոնից և Աղձնիքից արմեններին Վանի թագավորություն գաղթեցնելու մասին: Առնվազն այդ ժամանակից ի վեր, եթե ոչ ավելի վաղ, Վանի թագավորությունում ապրել են արմեններ, որոնք պետք է որ ժողովրդի առավել գործիմաց, ռազմագետ ու արհեստավոր մասը լինեին և իրենց հետ բերեին որոշակի մշակույթ:

1980 թ. Պետինատոյի հրատարակած Էրլայի³⁰ սեպագիր արձանագրությունների լատինատառ վերծանումով՝ գիտական լայն շրջանառության մեջ մտավ Էրլայի սեպագիր արխիվը, որը թույլ է տալիս միանգամայն անսպասելի եզրակացությունների հանգել: Հրապարակված արձանագրություններն էլ ավելի խորացրին մեր պատկերացումները Ուրմեն կամ Արմի երկրի վերաբերյալ և հաստատեցին նրա գոյությունը դեռևս մ. թ. ա. III հազարամյակի կեսերին, թերևս, հոմերոսյան արիմների առասպելի ծնունդից էլ առաջ:

Ամենից առաջ, ինչպես նշում է վաղնջահայերի և նախահայկական մշակույթի ակնանավոր հետազոտողներից Վ. Իվանովը, Էրլայի վաղ շրջանի արձանագրություններից մեկում հանդես է գալիս *haia* կամ *haya* (սեպագրում՝ *ha-a*) անունով մի անձ, որը, և դա հատկապես ուշագրավ է, գործվածքի և զարդերի գնման նպատակով Էրլա էր եկել Արմի քաղաքից³¹: Խոսքը, իմ կարծիքով, ավելի շուտ Արմի երկրի մասին է, որը վաղ արձանագրություններում իր առանձին

²⁵ K. L e h m a n n - H a u p t. Sitzungsberichte des Königl. Preussischen Akademie d. Wiss., 1900, S. 621.

²⁶ Ն. Ա. դ. ն. գ. նշվ. աշխ., էջ 157:

²⁷ Այսպես պետք է հասկանալ «հողին հավասարեցրեց» արտահայտությունը, որ վերցված է ասորեստանյան արքաների բառապաշարից:

²⁸ Ն. Ա. դ. ն. գ. նշվ. աշխ. էջ 169:

²⁹ Նույն տեղում, էջ 174:

³⁰ Էրլա – հին ասորեստանյան գաղութներից մեկը Ասորիքում:

³¹ В. И в а н о в. Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Ва(х)агнун.— *ՊԲՀ*, 1983, № 4, էջ 31:

թագավորն ուներ, իսկ ավելի ուշ ժամանակի սեպագրերում Էրլայի փոխարքայի նստավայրն էր, հանգամանք, որ ընդգծում է նրա կարևոր դերն ու դիրքը շրջակա երկրների նկատմամբ: Իմ այս ենթադրությունը հաստատվում է և նրանով, որ Արմի քաղաքը հետազոտողները նույնացնում են Արմանում երկրի հետ, իսկ վերջինս Նարան-Սուեն արքայական թագավորի արձանագրություններում հիշվում է Էրլայի հետ:

Էրլայի մի այլ արձանագրության մեջ ևս խոսքը **Haia (Haya)** մի ուրիշ մարդու մասին է, որը դարձյալ գնումների համար եկել էր Հուտիմու քաղաքից³²: Ըստ իս` խոսքը ոչ թե **Haia (Haya)** անունով մարդու մասին է, այլ ազգությամբ հայի: Տարբեր վայրերից եկած այս անձանց նույնությամբ կրկնվող անունները վկայում են, որ դրանք անձնանուն չեն, այլ նույն haia (haya) ազգությամբ պատկանող անձինք:

Էլ ինչպե՞ս կարելի է հայ և արմեն էթնոնիմների ծագումը կապել Էրիմենայի անվան հետ: Որ ուրարտական թագավոր Ռուսա III-ի հայրը կոչվել է Էրիմենա, հաստատում են 1892 և 1894 թվերին Թոփրախ-Կալեում (Վան) հայտնաբերված վեց տարբեր վահանների բեկորները, որոնց վրա գրված է Ռուսայի անունն ու հայրանունը` *L'ni aše Rusa še Erimenahiniše ušuni*: Դրանցից բացի, նույն Թոփրախ-Կալեում գտնվել են զարդաքանդակ և բրոնզե զարդեր, որոնք կրում են *Rusa Erimenahini* անունը³³: Այս հիման վրա Լեման-Հաուպտը Էրիմենային տեղ է հասկացնում իր կազմած ուրարտական թագավորների կազմի մեջ` իբր նա գահակալել է մ. թ. ա. 625–605 թթ.՝ Ռուսա Երկրորդից հետո և Ռուսա Երրորդից առաջ³⁴: Սակայն Ն. Ադոնցը իրավամբ համաձայն չէ այսպիսի լուծմանը և Էրիմենային դնում է իր կազմած ուրարտական թագավորների ցուցակում` առանց տարիների` Սարդուրի III-ի (646–610) և Ռուսա III-ի (610–585) միջև³⁵: Այս առթիվ Ադոնցը վկայակոչում է IX դարից Լուտիպրիի օրինակը, որը հիշատակված է որպես Սարդուրի I-ի հայր, բայց նրա թագավորելու մասին տեղեկություն չի պահպանվել. այդպես է և Էրիմենան: Շատ ուշագրավ է Գ. Ջահուկյանի հայտնած կարծիքը, որ Էրիմենա կարող էր ոչ թե հատուկ լինել, այլ հասարակ անուն, որ «ցույց է տալիս ուրարտական վերջին թագավոր Ռուսայի հոր հայկական ծագումը»³⁶:

Մենուայի, Արգիշտի I-ի և Սարդուրի II-ի արձանագրություններում Ուրմենի, Ուրմեհինի և Ուրմեուե անվանումները դիտարկելիս, մենք, կարծես, ականատես ենք դառնում այն բանին, թե ինչպես են Ուրմե կամ Արմե հիմքից խոնոր-ուրարտական -ինի վերջածանցով, իսկապես, ստեղծվել Արմեն և Արմենիա ցեղանունն ու երկրանունը: Ուրմենի-Արմենի հնչյունափոխությունը սեպագրերում նույնն է, ինչ որ Ուրարտու-Արարատ, Ուրտեխե-Արցախ: Արմե երկրի անվան տակ հայ պատմագիտությունն այսօր ճանաչում է դեռ մ. թ. ա. XII դարի առաջին կեսից Արմեններով բնակեցված հին հայկական Տարոնը (Մշո դաշ-

³² Նույն տեղում, էջ 32, արձանագրություն 37, VII տող 4-8:

³³ Ն. Ա դ ո ն ց. նշվ. աշխ., էջ 182:

³⁴ Նույն տեղում, էջ 196, տողատակ դ 1:

³⁵ Նույն տեղում, էջ 196:

³⁶ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. նշվ. հոդվ., էջ 52:

տր) և Աղձնիքը³⁷, ասորեստանյան արձանագրությունների հին Շուպրիան, որն ավելի ուշ՝ մ. թ. ա. 522 թ., Դարեհ Վշտասայանի Բեհիսթունյան արձանագրության պարսկերեն տեքստում կոչվել է Արմինա:

Ի լրումն ասվածի, Գր. Ղափանցյանը Արմե երկիրը տարբերում է Շուպրիայից և նույնացնում վաղ ասորեստանյան աղբյուրներում (այսպես կոչված «կապադովկյան աղյուսակներում») հիշատակված Արիմե (Arime) երկրի հետ, որը տեղադրվում է Շուպրիայից արևմուտք՝ ներկայիս Արգանա-սու գետի (Զիբենե-սու-ի վտակը) շրջանում, այն է՝ պատմական հայոց Անգեղտուն գավառում, իսկ Արմե երկրի Նիհիրիանի գլխավոր քաղաքը դնում է Անգղ նշանավոր ամրոցի տեղում³⁸: Ըստ այսմ, արիմները բնակվում էին նաև վաղ ասուրական արձանագրություններում հիշված Արիմե երկրում: Արդեն XII դարի առաջին կեսից, ըստ պատմական վկայությունների, Արմենները բնակվում էին հին հայկական Տարոն և Աղձնիք նահանգների տարածքում ու տարածված էին նաև Արարատյան (Ուրարտական) թագավորության այլ վայրերում:

Այսբանից հետո, էլ ինչպե՞ս կարելի է պնդել, թե VII դարի վերջին Սկյուր Մադիեսի դեմ տարած «ցնցող հաղթանակների շնորհիվ» շրջակա ժողովուրդները Էրիմենայի անունով մեր ազգը սկսեցին կոչել Արմեն:

Արամի առասպելի նոր լուսաբանությամբ Մարկվարտը նպատակ չունեք տուրք տալ հելլենիզմի դարաշրջանի ծավալապաշտական առասպելներից մեկին, որի հերոսը՝ թեսալացի Արմենը, Ստրաբոնի հաղորդմամբ, Յասոնի և մյուս արգոնավորդների հետ իբր եկել է Կովկաս, և նրա անունով Հայաստանը կոչվել է Արմենիա³⁹: Նա ապացուցում է հակառակը՝ Արիմները հայերի նախնիներն են, և Արմեն անունն էլ առաջ է եկել նրանց ցեղանունից: Յույց տալով Արմենների գաղթը Փոյուզիայից և, հատկապես Անգորայի (ներկայումս՝ Անկարա) շրջանից Կապադովկիայի ու Փոքր Հայքի վրայով դեպի Հայկական լեռնաշխարհ, գերմանացի մեծ հայագետը դրանով իսկ ընդգծում էր, որ Անատոլիայի այդ բոլոր վայրերը հայերի նախահայրենիքն են եղել, որտեղից եկվոր թուրքերը նրանց տեղահանում և հոծ թափորներով Միջագետքի կիզիչ անապատներն էին քշում: Նույն մտքով էլ ակադ. Ս. Երեմյանը Արամի անվանակոչած «Պռոտին Արմենիան» թարգմանում է «Նախնական Հայաստան»՝ այն հիման վրա, թե Խորենացու ժամանակ (V դար) ժողովուրդը հիշողություններ էր պահպանել Փոքր Ասիայում հայերի սկզբնական հայրենիքի մասին⁴⁰: Սակայն Արամի հիմնած «Պռոտին Արմենիան» - Առաջին Հայքը չի կարող նշանակել «Նախնական Հայաստան». Խորենացին տեղ չի թողնում այդպիսի մեկնաբանման համար: «Պատմութիւն Հայոց»-ի Ա. ԺԴ գլխում պատմահայրը հենց ուղղակի իմաստով նկատի ունի Առաջին և Երկրորդ Հայքերը, որոնց տակ նա հասկանում է Կապադովկիա պրովինցիան՝ Կեսարիա մայրաքաղաքով, որ

³⁷ Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971, էջ 423:

³⁸ Г. А. К а п а н ц я н. Хайаса-колыбель армян. Ереван, 1947, с. 198-199. Բ. Պիտրովսկին Նիհիրիանի անվան տակ հասկանում է հետագայի Նիքիերտ (Մայաֆարկին, Մայփերկաթ, Մարտիրոսպոլիս) քաղաքը Մեծ Օռփք գավառում (տե՛ս В. П и о т р о в с к и й. К вопросу о происхождении армянского народа. Ереван, 1946, с. 9, 20, 27):

³⁹ Strabonis Geographia, XI. 4, 8; XI. 12-13.

⁴⁰ Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 234:

հույներն անվանում էին «Պռոտին Արմենիան», և դրանից արևելք ընկած Փոքր Հայքը:

Սկզբունքորեն այլ է խնդիրը, երբ պրոֆ. Բ. Հարությունյանը Խորենացու հունարեն մեջբերած «Պռոտին Արմենիան»-ը թարգմանում է «գրավյալ Հայաստան», իբր «Գրավելով Կապադովկիայի արևելյան շրջանները, որոնք այդ վաղնջական ժամանակներում «Պատուկա» կամ, թերևս, «Պակտուկա» էին կոչվում, Արամ-Արամանի-Էրիմենան այն անվանել է «parōtan Armenian», որը, թերևս, նշանակել է «գրավյալ Հայաստան»⁴¹: Խոսքը վերաբերում է այն տարածքին, որ Յ. Մարկվարտը համարում էր հայերի նախահայրենիքը:

Ինչպե՞ս կարող էր Էրիմենան Կապադովկիան կոչվել «Արմենիա», եթե դրանից առաջ «Արմեն» և «Արմենիա» անուններ առհասարակ գոյություն չունեին: Եվ հետո, Խորենացին չի ասում, թե Արամն է իր անունով Կապադովկիան անվանել «Պռոտին Արմենիան», այլ որ ուրիշ ազգերն են Արամի անունով հետագայում մեր ազգը կոչել «Արմեն», իսկ երկիրն էլ հույներն են կոչել «Պռոտին Արմենիան» - «Առաջին Հայք», որովհետև նրա հարևանությամբ Արամը հիմնել էր նաև Երկրորդ Հայքը:

Հարգարժան պատմաբանի ենթադրությամբ, չընկալելով parōtan բառի իմաստը, Խորենացին այն շփոթել է «պռոտին» (Πρωταν = առաջին) հունարեն բառի հետ⁴² և Էրիմենայի նվիրագրվող parōtan Armenian կապել «Առաջին Հայք» վարչական միավորի հետ: Այսերեբուն հիմքի վրա հարգելի հեղինակը կարծում է, թե հիշյալ բառը ծագում է մարերեն parōt կամ parōta բառից, որ թարգմանվում է «կովել», «պայքարել մեկը մյուսի դեմ»⁴³: Բայց այս դեպքում paretan Armenian պետք է որ նշանակեր ոչ թե «գրավյալ Հայաստան», այլ «կովող, մարտնչող Հայաստան»:

Քանի որ Պայապիս Քաադյա Տիտանյանը բնությամբ զավթել էր երկու մեծ ծովերի միջակայքը՝ Փոքր Ասիան, ապա միանգամայն անարդար կլինի կարծել, թե Արամը նվաճել է Եփրատից արևմուտք ընկած երկրները: Քա(յ)ադը Քամի սերունդներից էր, Բելի (Նեբրովթի) թոռան թոռը. Քայադի ավագ որդին էր Արբելը⁴⁴, իսկ Պայապիսը, հավանաբար, Քայադի կրտսեր որդիներից էր, Տիտանյան Բելի ցեղից՝ երիտասարդ Հայկազն Արամի ավագ ժամանակակիցը, որին պատերազմում հաղթելով, Արամը հալածում է Փոքր Ասիայից: Այսինքն՝ Արամն ազատագրել է զավթած, ամայացրած երկիրը մի բնացողից, որը ժողովրդի հիշողության մեջ մնացել է Տիփոն հրեշի կերպարանքով: Ուստի և որևէ հիմք չկա «Պռոտին Արմենիան» «գրավյալ Հայաստան» հասկանալու և պարզ հունարեն «պռոտին» բառը մարերեն կասկածելի բառով փոխարինելու: Մանավանդ որ ոչ միայն Խորենացին է Կապադովկիան անվանում «Պռոտին Արմենիան», այլև «Դաշանց թղթի» հեղինակը, որն օգտվել է հունարեն նախաբ-

⁴¹ Բ. Հարությունյան, *նշվ. աշխ.*, էջ 79:

⁴² Նույն տեղում, էջ 78:

⁴³ Նույն տեղում, էջ 79. *հմմտ*՝ «Altiranisches Wörterbuch von Christian Bartholomae», Strassburg, Verlag von Karl J. Iubner, 1904, S. 868-869.

⁴⁴ Խոր., *Ա. Ե.*, էջ 18, 20:

նագրից և տեղյակ չլինելով Արամի ավանդությանը՝ «Պոռտին Արմենիան»-ը Առզէոս լեռան հետ նույնպես տեղադրում է Կապադովկիայում:

Իհարկե, ապրելով V դարում, Խորենացին չէր կարող տեղյակ լինել, որ Հուստինիանոսը VI դարում կայսրության մեջ մտնող հայկական հողերը բաժանելու է չորս վարչական շրջանների՝ Հայքերի, Բայց Պատմահայրը քաջատեղյակ էր իր ժամանակ գոյություն ունեցած Առաջին ու Երկրորդ Հայքերին և էլի ուրիշ բաների, որոնց այսօր ումանք դեռևս վերահասու չեն: Այլապես, ինչո՞ւ է Պատմահայրը սրտնեղած ասում. «Իսկ որ այլ ի յումանց ասի ի յունական կողմանսն՝ մեզ ոչ է հաճոյ. այլոց որչափ կամք իցեն»⁴⁵: Մեր օրերում քանի՞ սն են գլխի ընկել, որ Պատմահայրը նաև այդ մեզ է ասում. այդ մենք ենք նրան երբեմն այնպիսի բաներ վերագրում, որ նրա համար ընդունելի չեն: Եվ իսկապես, որքան հաճախ ենք մենք Մովսես Խորենացուն «հանճարեղ», իսկ նրա երկը «անգուգական» անվանում, նույնքան հաճախ էլ մեղադրում ենք նրան զանազան պարզունակ բաներ չհասկանալու ու շփոթելու մեջ: Մինչդեռ իր ժամանակին Գյոթենն մի առիթով Ֆր. Շլեգելին հանդիմանում էր, որ եթե մեկը փորձում է խոսել Էվրիպիդեսի սխալի մասին, ապա դա պետք է անի ոչ այլ կերպ, քան նրա առաջ խոնարհվելով:

Երկրորդ փաստարկը, որ բերվում է հոգուտ «գրավյալ Հայաստան» իմաստի, այն է, որ «Արամի գրույցների համաձայն այն (Պոռտին Արմենիան – Ա. Մ.) ոչ հայկական երկիր է, որի բնակիչներին նա պարտադրում է հայերեն լեզուն սովորել»⁴⁶: Իրականում, Պայապիս Քատոյան իր բռնությամբ ամայացրել, անբնակ էր դարձրել Կապադովկացոց կողմերը. այդպես անտանելի և սուկալի հարկերով անապատ էր դարձրել իր շրջակայքը Ասորեստանի կողմերում Բարշամ անունով հսկան⁴⁷: Եվ Արամը անբնակ Կապադովկիան ևս լցրել է բնակիչներով, ճիշտ այնպես, ինչպես Կապադովկիայից մինչև Մեծ Հայք ընկած բազում անբնակ վայրերը: Դրա համար էլ Պատմահայրը մատնանշում է, թե Արամը «ըստ նմին օրինակի (այսինքն՝ Կապադովկիայի նման – Ա. Մ.) ի տեղեացն այնոցիկ մինչև ցրուն իւր սահմանսն, զբազում անբնակ երկիր էլից բնակչօք...»⁴⁸: Արամը շենացնում է ամայացած Կապադովկիան, շինել է տալիս այնտեղ Մաժաք-Կեսարիա դաստակերտը, լցնում, հավանաբար, հենց նախկինում այստեղ ապրած հայ բնակիչներով, ինչպես հետագայում հայոց Տիգրան թագավորը նորակառույց Տիգրանակերտը բնակեցնում է Մաժաքից (Mazaca) բերած հայ ժողովրդով՝ ըստ Ստրաբոնի վկայության: Այդպես էլ Արամն է վարվել նրանից առաջ: Հայերեն սովորելը վերաբերում է այլախոս տարրերին, ոչ թե հայերին. այլապես ումի՞ց պիտի սովորեին հայերեն խոսել:

Մի թե այսօր էլ, մեր քաղաքակիրթ կոչված ժամանակներում այդ նույնը չի կատարվում, երբ գերիշխող ազգն իր լեզուն ոչ միայն պարտադրում է՝ սահմանադրությամբ պետական լեզու հռչակելով, այլև տարբեր ուղղակի և անուղղակի ճնշիչ օրենքներով հարկադրում հպատակ ժողովուրդներին մոռանալ մայ-

⁴⁵ Խոր., Ա. ԺԴ, էջ 47:

⁴⁶ Խոր., Ա. ԺԴ, էջ 78:

⁴⁷ Խոր., Ա. ԺԴ, էջ 45:

⁴⁸ Strabonis Geographia, XII. 2, 9 (539).

րենի լեզուն: Այսինքն՝ ազգափոխ անելը քողարկվում է գերիշխող ազգի լեզուն իբրև պետական լեզու այլազգիներին պարտադրելով: Ուրեմն, ինչ զարմանալու բան կա, երբ հին ժամանակներում էին այդպես վարվում, երբ կիրթ ազգերի սահմանը որոշվում էր լեզուների տարածման սահմանով, իսկ անկիրթ ցեղերինը՝ ասպատակությամբ:

Կապադովկիան և Պոտոսին Արմենիան արևմտյան կողմից հայերեն լեզվի սահմանն էին, ուստի և Արամը երկրի վրա հսկելու համար իր ազգից կողմնապետ է նշանակում Մշակին՝ մի բյուր գորքով: Սա դառնում է ավանդույթ, որը հայոց թագավորները պահպանում են նաև հետագայում. հենց դա նկատի ունի Խորենացին, ու հար և նման հաղորդում է, թե հայոց առաջին Պարթև թագավոր Վաղարշակը արևելյան կողմից հայերեն խոսքի սահմանում երկու բյուրավոր⁴⁹ կուսակալ է նշանակում նահապետական տների ցեղերից՝ Սիսակյաններին և նրանց, որ Կադմոսի տնից էին⁵⁰. «Եւ յարևելից կողմանէ, զեզերք հայկական խօսիցս, [թողու Վաղարշակ] կողմնակալս բիրաւորս զերկուս ի ցեղից տանց նահապետութեանց, զՍիսակեանսդ և որ ի Կադմեայ տանէն»⁵¹. Ճիշտ այն, ինչ անում է հայկազն նախնի Արամը մեր երկրի արևմտյան կողմում:

Մեր հին հեղինակների ու մատենագիրների մոտ հայ լեզուն գիտակցվում էր իբրև երկրի պետական սահման. այդպես է Մովսես Խորենացու համար, այդպես է և Փավստոս Բուզանդի համար, ըստ որի՝ Թորգոմական երկիրը (Հայաստանը) հայ լեզվով խոսող ժողովրդի երկիրն է. «երկիրն [հայ] լեզուին Թորգոմական աշխարհի»⁵²:

Ձեռնմխությունից զերծ չի մնացել նաև Մովսես Խորենացու կազմած հայկյան ինը պսակավորների (թագավորների) ցանկը, որոնցով այնքան հպարտանում ու հրճվում է Պատմահայրը՝ նրանց որպես բնիկներ իրեն արյունակից և իսկական հարազատներ համարելով. «Եւ այժմ ահա զուարճացայց, ոչ փոքր ինչ կրելով խնդութիւն, հասանելով ի տեղիս, յորում մերոյ իսկ բնիկ նախնույն սերունդք ի թագաւորութեան հասանէն յաստիճան: Վասն որոյ արժան է մեզ աստանօր մեծ գործ կատարել, և բազումս ասել առարկութիւնս ճաշից», «Արդ այժմ անցից ի թիւ մերոց արանց, մանաւանդ թե թագաւորաց, մինչև ցտերութիւնն Պարթևաց: Քանզի ինձ այսոքիկ արք ի մերոց թագաւորաց են սիրելիք, որպէս բնիկք և իմոյ արեան առուք և հաւաստի հարազատք: Եւ սիրելի էր ինձ՝ յայնժամ գալ Փրկչին և զիս զնել, և առ նոքօք յաշխարհ զմուտն իմ լինել, և նոցա տէրութեամբն իրախճանալ, և յարդեացս ապրել վտանգիցս: Այլ վաղ ուրեմն փախեալ ի մէնջ պատահումն այն, արդեօք և վիճակ»⁵³:

Դեռ 1940 թ. Գր. Ղափանցյանը հապճեպ կարծիք էր հայտնել, թե հայկական «Պարոյր» (Paroyr) անունը ծագում է ասորեստանյան սեպագրերի Բարտատու անունից, որը հույն պատմահայր Հերոդոտի Պատմության մեջ հանդես է գա-

⁴⁹ Այսինքն՝ բյուր (տասը հազար զինվոր) ունեցող:

⁵⁰ Թարգմանությունը մերն է:

⁵¹ Խոր., Բ. Ը, էջ 112-113:

⁵² Բուզ., Գ. ԺԳ, էջ 52:

⁵³ Խոր., Ա. ԻԱ (ԻԲ), էջ 64-65. ԻԲ (ԻԳ), էջ 66-67:

լիս Պրոտոթյունես ձևով⁵⁴: Գր. Ղափանցյանն այդ կարծիքը կրկնեց նաև 1947 թ. հրատարակած «Хайаса - колыбель армян» շատ արժեքավոր, կարելի է ասել՝ շրջադարձային ուսումնասիրության մեջ⁵⁵: Նշանավոր ուրարտագետի այս տեսակետի դեմ հիմնավոր առարկություններով հանդես եկավ Բ. Մ. Դյակոնովը, որը թե՛ ժամանակագրական նկատառումներով և թե՛ Պարույր-Պարտատուա անունների ազգակցական-հիմաստաբանական կապը ժխտող լուրջ փաստարկներով հերքեց Պարույրի անձի ու անվան կապը հելլենական Պրոտոթյունեսի և ասուրական Պարտատուայի հետ՝ ցույց տալով վերջինիս հնարավոր ծագումը հին իրանական Paratatava-ից⁵⁶: Հերոդոտը հաղորդում է, թե երբ ասորեստանցիների դեմ տարած հաղթանակից հետո Մեդիայի թագավոր Կյուաքսարեսը պաշարեց Նինվեն, սկյութների մի մեծ բանակ՝ Պրոտոթյունեսի որդի Մադյունեսի գլխավորությամբ, Կովկաս լեռան կողմից ներխուժելով, ճակատամարտում պարտության մատնեց մեդացիներին (մարերին) և նվաճեց ողջ Ասիան⁵⁷:

Հերոդոտի այս ամբողջ պատմածի առթիվ ժամանակին իր ծանրակշիռ գնահատականն է տվել մեծն Ն. Ադոնցը. «Այս շփոթ հաղորդումը անհարիր է ուրիշ ստույգ աղբյուրներից մեզ հայտնի փաստերի հետ: Ասորեստանի մայրաքաղաքն ընկավ 612 թվականին. ճակատամարտը Լիդիայի դեմ վերաբերում է 585 թվականին, սկյութների երևան գալը՝ մոտ 680 թվականին և մարերի պետության անկումը՝ 552 թվականին: Այս թվականները վիճարկման ենթակա չեն և նսեմացնում են Հերոդոտի պատմածից բխող թվականները: Սկյութների տիրապետությունը 28 տարի՝ կասկածելի է մնում»⁵⁸: Մրանով իսկ Ն. Ադոնցը հարցականի տակ է դնում Հերոդոտի հաղորդածի իսկությունը՝ բացառելով Կյուաքսարեսի կողմից Նինվեի պաշարման և սկյութ Մադյունեսի հարձակման գուցադիպումը:

Նույն նկատառումների վրա հենվելով՝ Ս. Երեմյանը մատնանշում է. «Այն երևաբար Հերոդոտի այս տեղեկության մեջ իրար են խառնվել երկու իրադարձություն. սկյութական թագավորի, Պրոտոթիեսի որդի Մադիոսի կողմից կիմերների ջախջախումը 654 թվականին, որի մասին վկայություններ են պահպանվել Ստրաբոնի մոտ»⁵⁹ և ինչ-որ մեկ այլ անձնավորության գլխավորությամբ «սկյութական» զորքերի մասնակցությունը Նինվեի պաշարմանը մ. թ. ա. 612 թվականին, անձնավորություն, որին շփոթել են այս Մադիոսի հետ»⁶⁰:

Ինչպես հաճախ է լինում բավարար հիմքեր չլինելու դեպքում, մոտավոր ենթադրություններից արվում են հեռուն միտվող հետևություններ, որոնք էլ հան-

⁵⁴ Գր. Ղափանցյանն. Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, էջ 217:

⁵⁵ Гр. Капанцян. Хайаса—колыбель армян, с. 150.

⁵⁶ И. М. Дьяконов. Предыстория армянского народа. История Армянского нагорья с 1500 по 500 г. до н. э., Хурриты, Лувийцы, Протоармяне. Ереван, 1968, с. 174.

⁵⁷ Հեռոդոտի. Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Միսոն Կրկյաշարյանի, Երևան, 1986, գիրք I, 103-104, էջ 45-46:

⁵⁸ Ն. Ադոնց. Արևիկա, էջ 291:

⁵⁹ Strabo, I, 3, 21.

⁶⁰ Ս. Երեմյան. Կիմերական և սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ.— ՊԲՀ, 1968, № 2, էջ 89-115: Տե՛ս նաև՝ Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 432:

գում են կտրուկ եզրակացության: Եվ ահա, պրոֆ. Բ. Հարությունյանը, կրկին վերադառնալով Գր. Ղափանցյանի սույն մերժված տեսակետին, գտնում է, որ ոչ թե հայոց առաջին հայկյան թագավոր Պարույրն է օգնության հասել մարաց թագավոր Վարբակեսին, ինչպես տեղեկացնում է Մովսես Խորենացին, այլ սկյութ Պարտատուա-Պարույրը, և այս սկյութ առաջնորդն էլ Գիաքսարից թագավոր է պսակվել հարավային Հայաստանի վրա⁶¹: Ասել կուզի, այս սկյութ թագավորին է մեր «հանճարեղ» Խորենացին իր «անգուգական» Պատմության մեջ ներկայացնում իբրև բնիկ, իրեն արյունակից և իրեն հարազատ պսակավոր Հայկի սերնդից:

Այն, որ Հերոդոտը շփոթել է իրադարձությունները և շեղվում է պատմական իրականությունից, այդպես կարծում են ոչ միայն վերոհիշյալ հետազոտողները, այլ նաև ինքը՝ Մովսես Խորենացին, որովհետև Վարբակեսի ձեռքով Սարդանապալին տապալելու և Ասորեստանին տիրելու մասին խոսելիս, Պատմահայրը դիտել է տալիս. «Բայց եթե այս բանը ուրիշների մոտ տարբեր է պատմվում, մի զարմանար: Որովհետև ինչպես որ մեր (Պատմության) առաջին գլուխներում մեղադրեցինք մեր հին նախնիների անիմաստասեր բարքն ու ճաշակը, նույնը պատահում է և այստեղ: Որովհետև ինչ գործեր որ կատարվել են Նաբուգոդոնոսորի հոր կողմից, գրի են առնված նրանց հիշատակագիրների ձեռքով, իսկ մերոնք, որովհետև այսպիսի բան չմտածեցին, (նրանց գործերը) նշանակվեցին վերջում»⁶²: Ակնհայտ է, որ Պատմահոր խոսքը վերաբերում է Ասորեստանի կործանման գործում Պարույրի մասնակցությանը, որն ուրիշների կողմից, այն է՝ հենց Հերոդոտի Պատմության մեջ, տարբեր է ներկայացված, իսկ Խորենացին քաջ ծանոթ էր նրա Պատմությանը. բազմաթիվ ապացույցներ ունենք դրա համար:

Ոչ մի աղբյուրում՝ ասորական թե հունական, չի վկայված, թե սկյութ Պարտատուան մասնակցել է, մեղացիների հետ դաշնակցած, Ասորեստանի գերիշխանության տապալմանը և Նինվեի պաշարմանն ու գրավմանը: Բայց քանի որ կանխավ որոշված է՝ ինչ գնով էլ լինի հայկազն Պարույրին ներկայացնել որպես սկյութ Պարտատուա, ապա այս անհիմն ենթադրությամբ Պարտատուա-Պարույրը մեկ Վարբակեսի հետ մասնակից է դառնում Նինվեի 612 թվի գրավմանը, մեկ էլ Պարույրն է որպես Պարտատուա մասնակցում 673 թվի Մեդիայի ապստամբությանն ընդդեմ Ասորեստանի, չնայած որ այդ երկու անցքերի միջև 60-ամյա անջրպետ կա:

Պարույրի հայր Սկայորդին ևս ձեռագրական աղավաղումների հիման վրա ներկայացվում է որպես սկյութ, և նրա անունը սրբագրվում է «Սակայորդի», այսինքն «սակի կամ սկյութի որդի» մոռանալով, որ Պարույրին «հայկազն ա-

⁶¹ Բ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 55, 57:

⁶² Մովսես Խորենացի. Պատմություն հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Մտ. Մալխասյանցի, Երևան, 1968, Ա. ԻԱ, էջ 107: «Ի հորէն Նաբուգոդոնոսորայ գործք» պետք է թարգմանել «Նաբուգոդոնոսորի հոր գործերը», որովհետև խոսքը վերաբերում է վերջինիս հորը՝ Նաբուպալասարին (մ. թ. ա. 626–604): Այստեղ Խորենացին հետևում է Եվսեբիոսի «Ժամանականք»-ին: Նույն սխալը կատարել է Բ. Ուլուբաբյանը (Մովսես Խորենացի. Պատմություն հայոց, թարգմ. Բ. Ուլուբաբյանի, Երևան, 2003, էջ 111): Ճիշտ են թարգմանել Ռ. Թումսոնը (անգլերեն) և Գ. Սարգսյանը (ռուսերեն):

նաջին բնիկ թագավոր» հռչակող Խորենացին երբեք չէր կարող միաժամանակ նրա ծագումը խուժողուժ սակերի հետ կապել: Բայց հարգելի Բ. Հարությունյանն իր կարծիքը հաստատելու համար բերում է մի ավելի զորեղ փաստարկ, որի դեմ, թվում է, ոչ մի առարկություն չինել չի կարող. «Սկայորդին հիշատակվում է Վանի թագավոր Ռուսա II-ի թողած վավերագրերից մեկում, որտեղ ասված է. «Հենց այդ նույն տարում, (որ) Ռուսայի առջև Արգիշտ որդու Շագայորդին հզոր արքան Բշկուգու-ուլխե (ցեղի) գնաց դեպի - Մանա՝ Աքայա (Աքավա) տեղն իր (և) երբ...»

(a-ku-ke MU^mRu-sa-a URU^mAr-gist[e-h]i - n[é]
 mŠa-ga DUMU tar-a⁶³ LUGAL Jš-qu-gu-ul-hi-e
 u-la-b[é] k^{ur}Ma-na-i-di^mA-ka-á-a
 e-si-i a-še...)⁶⁴:

Հայկյան թագավորներին սկյութական ծագում վերագրելու համար Բ. Հարությունյանը հիմք է ընդունում վանյան թագավոր Ռուսա II-ի թողած վավերագրերից մեկում իբր հիշատակված «Սկայորդի» անունը և բերում է արձանագրության թարգմանությունը, որ պատկանում է Հ. Կարագյոզյանին: Վերջինս, սակայն, արտասույել և թարգմանել է ընդամենը արձանագրության առաջին մասը, որից օգտվողը չպետք է շտապեր արձանագրության բովանդակության մասին ոչ վերջնական գաղափար կազմել և ոչ էլ կարծիք հայտնել:

Բ. Մ. Դյակոնովի հրատարակած արձանագրությունը շարունակվում է այսպես՝ LUGAL-ne^dHal-di-né a-šú-me^mRu-sa-a-hi-na^{KUR}Qi-il-ba-na-ka E. BAR - ni-i-né: Մեջբերում ենք Դյակոնովի ամբողջական թարգմանությունը. «Год, в который из города Русы, Аргиштиева(сына), Шага, сын старший царя шикугульского пришел в Ману на Акай место, когда царя Халдия поселил(и) мне (=нам?) в Русахинили из (находящегося) около (страны) Кильби(ни) святилища»⁶⁵.

⁶³ Կ. Լեման-Հաուպտի վերծանած տեքստում Sagaštar անունը կամ անհասկանալի բառը Š. Քրոնիգը տառադարձում է Ša-ga-1a(?)-tar-a և հավելում KUR (երկիր) գաղափարագիրը՝ թարգմանելով. (Ռուսան) Շագաթարային՝ Ելկուգաշա երկրի մարդուն... Մանա երկր(ում)...» (F. König. Handbuch der Chaldischen Inschriften, Graz, 1955-57, S 178): Գ. Մելիքիշվիլին վիճելի անվանը հավելում է Luga (արքա) գաղափարագիրը: Sa-ga - astar-a LUGAL և թարգմանում. «Մագաշտարան՝ Բշկուգուլխիի արքան գնաց Մանա երկիրը» և այլն (տե՛ս Գ. Ա. Մե-լի-կ-շ-վ-ի-լ-ի. Урартские клинообразные надписи. М., 1960, с. 348): Դրանից հետո Բ. Մ. Դյակոնովը, Saga համարելով անձանուն, դրան ավելացնում է JUR (որդի) կամ DUMU (որդի) գաղափարագիրը՝ Sa-ga DUVU tar-a LUGAL և թարգմանում. «Շագան Բշկուգուլխի արքայի ավագ որդին եկավ Վանա երկիրը» (И. М. Дьяконов. Եզ. աշխ., էջ 39): Այնուհետև Հ. Կարագյոզյանը, հենվելով Դյակոնովի վերջին տառադարձման վրա, թարգմանում է ավելի ճիշտ. «Շագայորդին հզոր՝ արքան Բշկուգուլ ուլխե ցեղի գնաց Մանա երկիրը» (Հ. Կարագյոզյան. Ուրարտական գաղափարագիր անձանուններ. - ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններ», 1984, №1, էջ 78):

⁶⁴ Բ. Հարությունյան. Եզ. աշխ., էջ 39: Ուրարտերեն տեքստը և հայերեն թարգմանությունը տե՛ս Հ. Կարագյոզյան. Ուրարտական գաղափարագիր անձանուններ, էջ 78:

⁶⁵ И. М. Дьяконов. Урартские письма и документы. М.-Л., 1963, текст № 12, с. 38-39, ТК 1898/99.

Բհարկե, դժվար է առհասարակ կասկածի տակ առնել ուրարտերենի թարգմանիչ Հ. Կարագոյոյանի հետազոտումը, բայց և այնպես նույնը չէի ասի տվյալ արձանագրության վերձանման մասին, որի մեջ նա փորձում է գրեթե անվերձանելի *Sagastara* բառը բոնագրուիկ ձևով թարգմանել «սագայորդի» (*Saga-DUVU*): Իսկ ենթադրյալ Շագայորդին ոչ այլ ոք է, քան հայկյան առաջին թագավոր Պարույրի հայր Սկայորդին, որի անունը մեր նորագույն «մեկնիչները» ստուգաբանում են իբրև «սակի՝ սկյութի որդի», և, ուրեմն, նրան հաջորդած հայկյան բոլոր թագավորները մինչև Տիգրան, դառնում են սկյութից սերած, այնինչ Խորենացին անգիտությամբ հրձվում է՝ նրանց Հայկի թագավորական զարմեր և իրեն արյունակից հարազատներ կարծելով: Իրականում պատմա-հայրը «սկայորդի» հասկանում է «հսկայի որդի», որի նախահայր Հայկը ինքը ևս հսկա էր և աստվածներից սերած հսկաների ցեղից⁶⁶:

Սա այն դեպքն է, երբ թարգմանիչն իր ձեռքի տակ եղած սեպագիր արձանագրությունը վերձանելիս տեքստը հարմարեցնում է իր մտքում դրած նպատակին. քանի որ հանդիպել է տեքստում «*Saga*» բառը, ապա պետք է ինչ գնով էլ լինի, կողքին դնել «որդի», որպեսզի ստացվի Խորենացու Հայկյան I թագավոր Պարույրի հոր «Սկայորդի» անունը, և այն ստուգաբանվի իբրև սակի, այսինքն սկյութի որդի:

Ընդամին, թարգմանիչները միահամուռ մոռանում են, թե ինչու է արձանագրության սկզբում Ռուսան դրոշմել իր անունը և հայրանունը՝ Ռուսա Արգիշտի որդի՝ առանց իր մասին որևէ բան հայտնելու: Մի թե կարելի է հավատալ, որ Ուրարտուի նման հզոր երկրի արքան՝ Արգիշտիի որդի Ռուսա II-ը (685–645), փոխանակ պանծացնելու ինքն իրեն և իր թագավորությունը, իր արձանագրության մեջ փառաբաներ ինչ-որ աննշան ցեղապետի կամ նրա ավագ որդուն՝ արքայավայել տիտղոսներով՝ «Շագայորդին հզոր՝ արքան Իշկուգու-ուլխե (ցեղի)»: Իրականում արքայական այդ մեծարանքը վերաբերում է իրեն՝ Ռուսային:

Ըստ իս, *Saga* ոչ հատուկ անուն է և ոչ առավել ևս «*Sag*» կամ «սկյութ», այլ նշանակում է «հսկա», գրաբար՝ սկայ - Ռուսան հսկա: Այստեղ ուրարտերեն թարգմանությամբ գործածված է աշուրերեն (ասորեստանյան) DAN-NU (= հսկա) մակդիրը, որ մինչ այդ գործածվում էր ուրարտական արձանագրություններում: Այսպես, Վանա լճի հյուսիս-արևմտյան ափին գտնված արձանագրության մեջ Ռուսա II-ի տարեգիրը DAN-NU աշուրերեն որոշիչ գաղափարագրով է փառաբանում Արգիշտիի որդի Ռուսայի թե՛ գործերը և թե՛ անձը.

Տող 10 [DAN. NU^{MES} za-du-bi^Dhal-di-ni-ni a] l-su-i-ši-ni
i^ru-sa-a-ni i^ar-giš-te-hi LUGÁL DAN. NU LUGÁL

Տող 11. [al-su-i-ni] LU[GÁL^{KUR}]b[i]-a-[i]-na-a-ú-e⁶⁷...

«Այս բոլոր հսկայական գործերը կատարեց Ռուսան՝ Արգիշտիի որդին՝ արքան հսկա(յագոր), արքան Բիայնա (Վան) երկրի...»:

⁶⁶ Խոր., Ա. Թ, էջ 32. «Ահեղը և երևելիք առաջինքն ի դից, և աշխարհի մեծամեծ բարեաց պատճառք, որ սկիզբն աշխարհի և բազմամարդութան: Եւ ի սոցանէ հարեալ գտան ազգ սկայիցն, անհեղեղք, յաղթանդամք մարմնով և վիթխարիք: [ա] Յորոց մի էր և Յապետոթեանն Հայկ, անուանի և քաջ նախարար, կորովաձիգ և հաստաղեղն»:

⁶⁷ Г. А. М е л и к и ш в и л и. Նշվ. աշխ., էջ 341:

Ի դեպ, DAN-NU մակդիրը հանդիպում է Ասորեստանի թագավոր Աշուրնա-ծիրպալ II-ի մ. թ. ա. 884 թ. արշավանքի արձանագրության մեջ՝ *Sadani dunnite* («լեռներ հսկա»)՝⁶⁸:

Ուշագրավ է, որ ուրարտական արձանագրության մեջ Ռուսա II-ը իրեն հորջորջում է նույն աշուրերեն մակդիրով, որով Ասորեստանի ահեղ թագավորը բնորոշում է իր ճանապարհին հանդիպած վիթխարի լեռները: Խնդրո առարկա Թոփրախ-կալեի արձանագրության մեջ ևս գործածված է Ռուսայի վերաբերյալ նույն որոշիչ - մակդիրը՝ միայն այս անգամ հայ ուրարտերեն *Saga* (սկայ՝ հսկա) հասկանալի բառով՝ «Ռուսան Արգիշտիի որդին հսկայագոր...»: Համեմատելու համար ասենք, որ Ագաթանգեղոսի Պատմության հեղինակը մի քանի անգամ սկայագոր է անվանում Տրդատ թագավորին՝⁶⁹: Եվ ոչ մի մտացածին օտար թագավորի «ավագ որդու» մասին այստեղ չի կարող խոսք լինել:

Այն պնդումը, թե Ռուսա II-ի սույն արձանագրության մեջ հիշատակված Բլկուգու-ուլխե ցեղը կամ երկիրը գտնվում էր Մանա երկրում⁷⁰, նույնպես զուրկ է որևէ հիմքից: Դա նույն Բշկիգուլու գավառն է, որ նվաճել էր դեռևս Արգիշտի I-ը իր գահակալության 2-րդ տարում մ. թ. ա. 785 թ.⁷¹: Արգիշտի I-ի և Ռուսա II-ի երկու արձանագրություններում էլ միննույն գավառն է, որ գտնվում էր Շիրակի դաշտից հյուսիս:

Սույն արձանագրությամբ զբաղվող մասնագետները աչքաթող են արել սկանավոր ուրարտագետ Ն. Հարությունյանի շատ կարևոր ցուցումն այն մասին, որ Խորխորյան և Սարգսրյան տարեգրությունների ներածական հայտարարություններում Խալդի աստծո անունից բերվում է տվյալ տարում նվաճված երկրների ու գավառների ընդհանուր ամփոփագիրը. «Եթե տվյալ տարում ձեռնարկվել է մեկից ավելի արշավանք, ապա ներածական հայտարարության մեջ հիշատակվող երկրները որպես կանոն վերաբերում են տարբեր արշավանքների և ուղղությունների:

Այնպես որ, կողք կողքի հիշվող երկրները հաճախ կարող են գտնվել Վանյան թագավորության հակադիր ծայրամասերում»⁷²: Նույն պատկերը տեսնում ենք և այստեղ՝ Ռուսա II-ի՝ խնդրո առարկա արձանագրության մեջ, որտեղ գործ ունենք միննույն տարում նրա ձեռնարկած երկու արշավանքի հետ՝ մեկը դեպի հյուսիս՝ Բշկուգուլու ցեղի դեմ, իսկ մյուսը դեպի հարավ՝ Մանա երկիրը: Այնպես որ, ամենևին հարկ չկա նոր նույնանուն գավառ հորինել Մանա երկրում:

Sa-gas-tar-a վիճելի անվան վերջին մասը՝ *tar-a* պետք է կարդալ *tur-a*, որի մեջ *tur* նշանակում է «ոչնչացնել, ջախջախել»⁷³: Ըստ այսմ, արձանագրությունը հաղորդում է, թե «միննույն տարում Արգիշտիի որդի Ռուսան՝ հսկայագոր

⁶⁸ Annalen Assurnasirpals, 132, col. I Keilinschriftliche Bibliothek. Sammlung der assyr. und babyl. Texte, hsg. von Schrader. Berlin 1883, S. 62.

⁶⁹ *U q w p w n q e n u*, §12, §202, §767:

⁷⁰ *Շ ա ր ա զ յ ր ա ն ն շ վ. հողվ.*, էջ 75, ծան. 36:

⁷¹ Н. А р у т ю н я н. Биаинили (Урарту). Ереван, 1970, с. 396.

⁷² Նույն տեղում, էջ 344 և հոգ:

⁷³ *Tur բառի նշանակությունը տե՛ս* И. М. Дьяконов. Указ. раб., глоссарий, с. 91.

ջախջախեց Իշկուգուլու ցեղի արքային, ապա գնաց Մանա երկիրը, Ատա-ա վայրը, սակերի երկիրը, որտեղ Խալդիի օգնությամբ շինեց Ռուսախինա քաղաքն ու տաճարը Քիլբանի երկրի մոտ»:

Այստեղ, Ն. Արոնցի հրատարակած տեքստի վերջնամասը էական տարբերություններ ունի Բ. Դյակոնովի հրատարակածի համեմատ, որոնց վրա ուշադրություն չեն դարձրել արձանագրության վերծանողներն ու թարգմանիչները. «Վան: Թոփրակ - կալա: Կավե տախտակ՝ *akuku MU¹Rusa-a¹Argište-hi¹Sagaštar¹Išqugulhie ulabi^pManai-di¹Ata-a esi-a^pSakki-ni* (սակերի երկիրը – Ա. Ա.)^d*Haldini asu-me^dRusahina^pQieibani-ta BIT parani* (տաճար)»⁷⁴:

Որ Ռուսախինա քաղաքն ու Խալդիի տաճարը կառուցողը ինքը՝ Ռուսան է եղել, և ոչ թե մտացածին ինչ-որ ցեղապետի հզոր որդին, հաստատվում է Մակուի մոտ գտնված մի վիմագիր արձանագրությամբ, որում ասված է, թե «Ռուսան կառուցեց BIT Parakku (տաճար) Խալդիի համար և վայրը անվանեց Ռուսայի (փոքրիկ) քաղաք»⁷⁵: BIT Parakku հմմտ. BIT Parani (Դյակոնովի տեքստում՝ E. BAR-ni-né):

Այնուհետև, ըստ Խորենացու, հայկյան առաջին թագավոր Պարույրի որդին և հաջորդն է Հրաչյան, որի անունը Պատմահայրը մեկնում է այսպես. «Մա Հրաչեայ կոչի վասն առաւել պայծառերես և բոցակնագոյն իմն լինելոյ»⁷⁶: Չնայած որ Խորենացու խոսքը վերաբերում է միայն «Հրաչեայ» անվանը, որը պարզապես նշանակում է կրակոտ՝ վառվռուն աչքեր ունեցող և մազաչափ կապչունի Հրաչյայի մազերի հետ, այսուհանդերձ Ղափանցյանը հարց է տալիս՝ իր տեսակետը հաստատելու մտքով. «Արդոք ք այս ևս ապացույց չէ սկյութական – սակական ծագման, քանի որ այդ ժողովուրդները ավելի հյուսիսային էին և շեկ պետք է լինեին»⁷⁷: Վերստին հարություն տալով Գր. Ղափանցյանի վաղուց մոռացված տեսակետին՝ Բ. Հարությունյանը Էրմենայի որդի Ռուսա III-ին նույնացնում է Խորենացու Հրաչյայի հետ⁷⁸, որի անունը կապում է իրանական ծագում ունեցող «arus» կամ «aurus» անվան հետ, որ, ըստ Մալխասյանցի, նշանակում է «սպիտակ» կամ «լուսափայլ»⁷⁹: Եթե «պայծառերես», «բոցակնայ» և «շիկահեր» սկյութա–սարմատական ծագման նշան են, ապա պետք է որ սկյութների կարգը դասվեր նաև Խորենացու Տիգրան Մեծ հայկյան թագավորը, որովհետև խարտյաշ (շիկահեր) գանգուրներ ուներ՝ «խարտեաշս այս և աղեբեկ ծայրին հերաց Երվանդեանս Տիգրան»⁸⁰, մինչև իսկ նաև Վիշապաքաղ Վահագնը, «և ի բոցոյն վազեր խարտեաշ պատանեկիկ, նա հուր հեր ուներ, ապա թէ բոց ուներ մօրոս, և աչկունքն էին արեգակունք»⁸¹:

⁷⁴ Bericht über die Ergebnisse der von W. Belck und Lehmann, 1898-1899 ausgeführten Forschungsreise nach Armenien. 1900, 135; Materialien, 105. Ն. Արոնցի նշվ. աշխ., էջ 182:

⁷⁵ Ն. Արոնցի նշվ. աշխ., էջ 182: Ն. Արոնցը Ռուսախինա քաղաքը տեղադրում է Մակուի շրջանում (տե՛ս էջ 212):

⁷⁶ Խոր., Ա. ԲԲ(ԲԳ), էջ 68:

⁷⁷ Գր. Ղափանցյանի նշվ. աշխ., Ուրարտուի պատմություն, էջ 217:

⁷⁸ Բ. Հարությունյանի նշվ. աշխ., էջ 81:

⁷⁹ Մալխասյանցի նշվ. աշխ., Հայերեն բացատրական բառարան, հ. Ա, Երևան, 1955, էջ 279:

⁸⁰ Խոր., Ա. ԲԴ (ԲԵ), էջ 72:

⁸¹ Խոր., Ա. ԼԱ (ԼԲ), էջ 86:

Հայկի գարմերին սկյութ ներկայացնելուց հետո հերթը, բնականաբար, պետք է հասներ հայ ժողովրդին, և դա չի ուշանում: Բ. Հարությունյանը նշում է, թե «սկյութները այնպես ներլուծվեցին հայկական միջավայրում, որ հետագայում հայերն իրենց վերագրում էին ոչ միայն հայկյան, այլև ասքանազյան (իմա՝ սկյութական) ծագում»⁸²: Ջարմանալի է, և՛ դր են հայերն իրենց սկյութական ծագում վերագրել:

Պատմական հեռավոր ժամանակներում հայերի և սկյութների ձուլվելու վարկածը հաստատելու համար Բ. Հարությունյանը Դրասխանակերտցու Պատմությունից վկայակոչում է իր խոսքով՝ «մի շատ արժեքավոր» և «հրաշքով պահպանված» տեղեկություն՝ Հաբեթի որդի Թիրասից և վերջինիս երեք որդիներից առաջ եկած ազգերի մասին. «Ասքանազայ, որ նախ զմերազնեայսս յիւր անուն Ասքանազեան անուանեաց՝ զՍարմատս նմա պայագատեր. իսկ Բիփատայ՝ զՍորմատս. իսկ Թորգոմայ զմերազնեայսս սեպհականեալ, յորում տիրեալ զԱսքանազեանն նախ անուանեալ յիւր անուն նուաճեր տուն Թորգոմայ»⁸³: Այս հիման վրա պատմաբանը հաստատում է՝ որ Հայաստանում իշխել են սկյութները, որոնք հետագայում Մադեսի և սկյութական մյուս առաջնորդների սպանությունից հետո հեռացել են Հյուսիսային Կովկասի տափարակները, որով Հայաստանում հաստատվում է Թորգոմյան ծագում ունեցող հարստություն⁸⁴:

Անտիկ և վաղբրիստոնեական հեղինակները, ինչպես Հովսեպոս Փլավիոսը, Հիպոդիտոս Բոստրացին, Եպիփան Կիպրացին, VI դարի բյուզանդական «Ձատկական ժամանակագրությունը» և այլ աղբյուրներ անդրադարձել են Նոյի որդիներից ու նրանց հաջորդներից տարբեր ազգերի առաջացման հարցին, և նրանք բոլորն էլ միահամուռ հաղորդում են, թե Թիրասի երեք որդիներից առաջինից՝ Ասքանազից առաջ են եկել սարմատներն ու սկյութները, Բիփատից՝ սավրոմատները և այլ ազգեր, Թորգոմից (Թոգարմա)՝ հայերը: Բայց հին հեղինակներից ոչ մեկը հայերին «ասքանազյան» ծագում կամ անուն չի վերագրում: Հիշյալ հատվածում Դրասխանակերտցին, պարզապես, իր ընթերցողին բացատրում է, թե ինչու են մեր առաջին մատենագիրները մեր ազգը ասքանազեան և տուն Թորգոմայ անվանել՝ «Արդ այսպէս իմա (իմացիր) Ասքանազեան զմեզ և տուն Թորգոմայ, և այսպէս քեզ հաւատարմացին, որ վասն նահապետութեան ազգիս է բան»⁸⁵: Եվ իսկույն էլ հասկացնում է, թե ինքն է այդպես մեկնաբանողը՝ շեշտելով, թե «մեր ազգի նահապետների այս գրուցավեպերը ոմանք այլ կերպ են ներկայացնում, ոմանք էլ այլաբանորեն» – «թէպէտն ոմանք այլազգաբար և ոմանք այլաբանաբար գրուցաց վէպս տան»⁸⁶:

Այնպես որ ոչ մի «շատ արժեքավոր» և «հրաշքով պահպանված» հաղորդման խնդիր չկա:

⁸² Բ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 58:

⁸³ Հովհաննես Դրասխանակերտցի. Հայոց պատմություն, Երևան, 1996, էջ 16, Բ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 81:

⁸⁴ Բ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 82:

⁸⁵ Հովհաննես Դրասխանակերտցի. Հայոց պատմություն, էջ 16:

⁸⁶ Նույն տեղում:

Բայց եթե մինչև իսկ «ասքանագեան» կոչվեին հայերը, այդ ո՞վ է մինչև հիմա օտար հեղինակների համընդհանուր ճանաչած «Թորգոմա ազգ»-ից պատմագիտություն ստեղծել, որ հիմա էլ անճարացած պատմական գիտությունը պիտի «ասքանագեան» թյուրիմացությունից հայ-սկյութական մուսանսներ բուծելով զբաղվի:

X դարի պատմիչի մեկնությունը աստվածաշնչային ծնունդների վերաբերյալ չի կարող պատմագիտության համար հիմք ծառայել: Ի դեպ, Դրասխանակերտցին իր վերոհիշյալ դատողության համար հիմք է ընդունել V դ. մատենագրության մեջ ընդամենը մեկ անգամ գործածված «ասքանագեան ազգ» արտահայտությունը, որ հանդիպում է կենսագիր Կորյունի մոտ: Եվ Կորյունն էլ այդպես անվանելով «Հայաստան ազգը», բոլորովին էլ նկատի չունի սկյութներին, այլ միայն Երեմիա մարգարեի խոսքը, որի մեջ «Այրարատյան թագավորություն» և «Ասքանագյան գունդ» կապակցությունները միասին են գործածված, և Կորյունն էլ կարծել է, թե դրանք երկուսն էլ՝ թագավորությունը և գունդը, Երեմիա մարգարեն հայկական է համարում:

Ընդամեն Երեմիայի սույն վկայությունը եբրայերեն բնագրում հավասարապես շեշտվում են Արարատի, Մինիի և Ասքանագի թագավորությունները, այսինքն՝ Արարատյանի և Ասքանագյանի միջև հիշվում է Մինի (Մանայի) թագավորությունը: Բայց քանի որ «Յոթանասնից» թարգմանության մեջ Մինի անունը աղավաղվելով դարձել է հուն. Ἰλλοῦ ἑμοῦ (յինէն-ինձնից), ապա և հայերեն թարգմանությունն էլ հունարենի նման չունի Մինի, և նշվում է միայն Արարատյան և Ասքան ազյան: Ըստ որում հունարեն τοῖς Ἀσχνυλζέοις («Ասքանագյաններին») բառը Սահակ Պարթևը թարգմանել է «Ասքանագյան գնդի». հետևաբար, V դարում Սուրբ գրքի թարգմանության մեջ մուծված հայերեն «գունդը» չի կարող վկայություն ծառայել մ. թ. ա. VII դ. առաջին կեսին ենթադրյալ սկյութ Պարույր Պարտատուայի հզոր իշխանության մասին: Եվ Երեմիան, որքան էլ մարգարե լիներ, չէր կարող կանխատեսել սկյութների ապագա էությունը Առաջավոր Ասիայում:

ИМЯ “АРАМ” КАК ВТОРОЙ ЭТНОНИМ АРМЯНСКОГО НАРОДА

АЛЬБЕТР МУШЕГЯН

Р е з ю м е

Крупный немецкий арменовед Йозеф Маркварт относил этноним “Армен” к названию племени Arimoi, обитавшего, согласно догомеровской легенде, у подножья горы Аргеос. Сравнительно недавно открытые клинописные надписи из Эблы (Сирия) позволяют приурочить этноним армян к середине III тысячелетия до Р. Х. и связать его со страной **Арме** (урартское **Урме**) или **Арманум**. Высказывается мнение, будто этноним армян возник от имени якобы существовавшего ванского царя Эримены, а значит, становление армянского этноса следует отнести к VII–VI вв. до Р. Х. Наряду с этим, имеет место необоснованная скифизация армянской

истории, когда целому ряду исконно армянских царей-хайкидов, которых отец армянской историографии Мовсес Хоренаци объявляет аборигенами и своей кровной родней, приписывается скифское происхождение; более того, скифы включаются в этногенез армянского народа.

THE NAME OF “ARAM” – THE SECOND ETHNONYM OF THE ARMENIAN PEOPLE

ALBERT MUSHEGHYAN

S u m m a r y

Famous German Armenologist J.Markwart related ethnonym “*Armen*” to the name of a tribe called *Arimoi* (according to pre-Homeric legend), which was settled at the foot of Mt. Argeos. Recently discovered cuneiform inscriptions (Ebla, Syria) allow to date back the origin of the ethnonym “Armen” to the 3rd millennium B.C. and connect it with the country of Arme-Armanum inhabited by the ethnos called *Haia*. Contrary to the given notions of the ancient monuments, an opinion has been expressed, according to which the formation and origin of the Armenian ethnos took place in the 7th-6th centuries B.C.; they connect the ethnic name of the Armenians with a name of Erimena – a supposed king of the Van Kingdom. At the same time the unfounded “Scythization” of the history of Armenia and the Armenian people is taking place. A Scythian origin is ascribed to a number of the original Armenian Haikid kings, with whom the father of the Armenian historiography Movses Khorenatsi (5th c. A.D.) declared his consanguinity.